ոչ-պաշտոնական թարգմանություն

Ռումինիայի խորհրդարան
Պատգամավորների պալատ

27 փետրվարի, 2019թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ
31-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

31 տարի է անցել այն ողբերգական իրադարձություններից, որոնցից տուժել են Խորհրդային Ադրբեջանում բնակվող գրեթե կես միլիոն հայեր: Հայ բնակչության դեմ հանցագործությունները կատարվեցին երեք խոշոր քաղաքներում՝ Սումգայիթում, Կիրովաբադում (Գյանջա) և մայրաքաղաք Բաքվում, այն պարզ պատճառով, որ, 70 տարի շարունակ պարտադրաբար գտնվելով Խորհրդային Ադրբեջանի Սոցիալիստական Հանրապետության կազմում, Արցախի ժողովուրդը, որոշեց խաղաղ և սահմանադրական ճանապարհով արտահայտելու իր ազատ ապրելու ցանկությունը և պաշտպանելու ինքնորոշման իրավունքը:

1988թ. փետրվարին սկսվեց հակահայկական հայտարարությունների և հանրահավաքների ալիք, որոնք ուղեկցվում էին՝ հայերի գույքի ոչնչացմամբ, ավերածություններով և դեմ արյունալի ոճրագործություններով: Հակառակ այս գործողություններին՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղ) ժողովուրդն ընտրեց իր իրավունքները պաշտպանելու խաղաղ և սահմանադրական ճանապարհը: Սումգայիթյան ջարդերն իրականացնողները վայելում էին Ադրբեջանի ղեկավարության լիակատար աջակցությունը, ինչպես նաև օգտվում էին խորհրդային իշխանությունների թողտվությունից:

Կարևոր է, որ մերօրյա ժամանակներում միջազգային հանրությունը հասկանա Սումգայիթում տեղի ունեցածի էությունը Լեռնային Ղարաբաղի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով, քանզի հակահայկական քարոզչությունը շարունակում է մինչ օրս: Ադրբեջանի ղեկավարությունը, ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա պարբերաբար խախտում է հրադադարի ռեժիմը և սպառնում է վերսկսել ռազմական գործողությունները Արցախի (Լեռնային Ղարաբաղի) դեմ:

Պետական մակարդակով կազմակերպված և կատարված հանցագործությունների հետևանքով հարյուրավոր հայեր կորցրին իրենց կյանքը: Դժվար է հավատալ, որ այս ահասարսուռ իրադարձությունները տեղի են ունենում արդի ժամանակներում: Այսպես պատահեց նաև հայ սպա Գուրգեն Մարգարյանի հետ, ով 15 տարի առաջ մասնակցում էր Բուդապեշտում ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ուսումնական դասընթացներին և կացնահարվեց քնած ժամանակ Ռամիլ Սաֆարովի կողմից, ով հետագայում հռչակվեց Ադրբեջանի ազգային հերոս:

Թեև շատ միջազգային կառույցներ իրազեկված էին Ադրբեջանի կողմից Արցախի և Խորհրդային Ադրբեջանի մյուս հայաբնակ վայրերում խաղաղ բնակչության դեմ կատարված վայրագությունների մասին, Ադրբեջանի իշխանությունները օգտվում են շարունակվող լռությունից, ինչ իր հերթին հանգեցնում է մարդու իրավունքների նոր խախտումների:

Սումգայիթյան ջարդը հանցագործություն էր ուղղված համայն մարդկության դեմ, իսկ դրա չճանաչումը՝ ինքնին հանցագործություն: Կարծում ենք, որ դրա միջազգային ճանաչումը և դատապարտումը նվազագույնն է, որ մենք կարող ենք անել՝ ի հիշատակ Սումգայիթի նահատակների:

Սումգայիթյան ողբերգության 31-րդ տարելիցի կապակցությամբ Ռումինիայի խորհրդարանի հայազգի պատգամավորների հայտարարության բնօրինակը հասանելի է հետևյալ հղմամբ https://bit.ly/2SBLyxw: